թէ ի մերում կողմանց իցէ»։ Ասէ Ղայմաղ Խանն. «Լո՛ւր սատաթլու (երջանիկ)· զի երկու գլխաւոր տեղի աղօթից գոյ Հայոց, մինն ի քում իշխանութեան է, որ կոչի Երուսաղէմ՝ ի կողմն Արապստանայ. և յամենայն ամի գան ուխտ անդ ի կողմանցն Պարսից բազումք և անթիւք, և տան մաքսս բազումս ի ճանապարհին, և Երուսաղէմի անթիւ տան դրամս. և յաւելու ի գանձ արքունի։ Այլեւ յերրորդ ամին միանգամ առաքեն յերուսաղէմայ յերկիրն Պարսից, և ժողովեն զբազում ոսկի և արծաթ և զդիպակ հանդերձս. և բերեն յերուսաղէմ, և է նա օգուտ Ազգի մերում։ Իսկ ի մերս կողմանէ ոչ գնան բազումք յէջմիածին. և թէ գնան եւս, ոչ տան նոցա այնքան, որ իւրեանց կերածն և ըմպածն վճարէ։ Եւ նոքա եւս առաքեն յերրորդ ամին միանգամ նուիրակ ի մերս կողմ, բայց ոչ տան, որպէս նոքա տան, այլ սակաւ, մեր տասն տունն՝ նոցա մի տունն չափ ոչ տայ. և զայն եւս եղիազարն կամի չտալ։ Եւ զայս ծանուցանեն Շահին. և նա պնդապահս տայ առնել աշխարհին իւրոյ չգնալ յերուսաղէմ, և ընդնուիրակն եւս արգելուն, և այս պակասութիւն մեծ լինի Թագաւորութեան մերում, նա թէև խռովութիւն եւս անկանի ի մէջ երկուց թագաւորութեանց»։ Իբրև լուաւ զայս Խոնթկարն Մահմուտ, սոսկացաւ յոյժ, և ասէ ցՂայմաղ Խանն. «Հրա-